և Նպատ լերանց միջավայրը՝ որոց առաջինը կը գտնուի Բաղրեւանդայ արեւմտեան կողմն, երկրորդն արեւելեան:

Բնական դիրքով երկու գեղեցիկ դաշտագետիններու բաժանուած է Բաղրեւանդ, —արեւելեան և արեւմտեան, որ կը բաժանեն Սինակ և Ծաղկանց լեռներէ Մուրատի աջ և ձախ ափը ելած, ընդ հատուած ճիւղերն:

Արեւելեան դաշտագետինը, որ պատմութեան մէջ Զիրաւ ասուած է. կը տարածուի Նպատայ հիւսիսն և արեւելեան հիւսիսն նաև յարեւելս, մինչև Դիատինայ արեւելեան կողմն գտնուած Իփեկայ կէտուն:

Այս դաշտագետնոյն միջավայրէն կը հոսի Մուրատ յարեւմուտս կոյս, այստեղ է հռչակաւոր Ս. Յովհաննու վանք (Ի-Չքիլիսայ) որ Նպատ լերան հիւսիսային ոտքին, Եփրատի ձախ ափին վերայ կառուցուած է. այս վանքէն կը տեսնուի Նպատայ դագաթը՝ Մեծն Նէրսէսի աղօթավայրը կառուցուած մատուռն, ուր կանգնած՝ բաղկատարած յարեւելս դարձած, Նպատայ ստորոտը, Զիրաւայ դաշտի մէջ կռուող հայկական բանակի յաջողութեան համար աղօթած է Մեծն Նէրսէս[1]: Այս դաշտին մէջ է Դիատին գիւղաքաղաքն, որոյ հարաւն է Դիատինայ հարիւրաւոր ջերմուկներն, ուր Եփրատի վերայ հաստատուած է կրային ջրէ կազմուած բնական կամուրջն:

ելն.՝ ոմանք կասեն թէ Արածանին առանձին ջուր է՝ որ Բիւրակնեան լեռնէն կիջնայ, զԽնուս և Ապահունիս երկու բաժանելով՝ Եփրատի կը խառնուի. Խնուսայ մէջ Բինկօլի ջուր կասուի՝ իսկ Ապահունեաց մէջ Խնուսայ ջուր. իսկ ըստ իս Արածանին Շեռեան լինելու է:

[1] Այս մատուռէն հարաւ քանի քայլ խոնարհ կայ Սրբոյն Ճգնարանը՝ ուր ևս ուխտ կը գնայ ժողովուրդն: